



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«12» *Ծայրագ* 2009 թ.

№ - 59-Ն/1

**ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N27-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 2158-Ն որոշման 4-րդ կետը, դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1821-Ն որոշմամբ հաստատված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի դ) ենթակետով,

**ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ**


1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2006 թվականի փետրվարի 27-ի «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը և կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմը հաստատելու մասին» N27-Ա/1 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումը.

Հրամանով հաստատված կանոնադրության 12-րդ կետը լրացնել նոր՝ «Ժ» ենթակետով՝ համաձայն կից կանոնադրության

2. Հաստատել «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

3. «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ 20-օրյա ժամկետում կազմակերպության կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել նախարարի տեղակալ Ֆ. Բերիկյանի վրա:

  
Մ. ՀԱՄԱԲՈՒՄՅԱՆ

ՆԵՐԴԻՐ 002

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական 03Ա 071066

Անվանումը «Շրջանի փառաքել տնտեսական  
արհեստագիտական կազմակերպության կենտրոն»  
պետական ոչ առևտրային կազմակերպություն

Գտնվելու վայրը (հասցեն) \_\_\_\_\_

Այլ տեղեկություններ Ներքին գործերի նախարարության  
կատենադրությունը կապարարել է  
հ/ 04 հունիսի 2009 թ.

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ



ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

*[Handwritten signature]*  
(ստորագրություն)

« 04 06 2009 թ. »

Կազմված է 08.05.2009թ և բաղկացած է 8 էջից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ  
ՕՐԻՆԱԿ 2

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ԵՍՏՄԵՍԱՐԻ


12.05.2009թ

N 59-Ա/1 հրամանով

հասխարհի

Ա. Համբարձումյան

« 12 » « 05 » 2009թ



**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ


ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 28.03.2006թ

գրանցման թիվ 292.100.2204

վկայական 03 Ա 071066

28.03.2006թ գրանցված կանոնադրության  
թիվ 1 փոփոխությունը նոր

խմբագրությամբ գրանցված է  
իրավաբանական անձանց պետական  
ռեգիստրի Գյումրու տարածքային բաժնի  
կողմից « 04 » « 06 » 2009թ



Գյումրու Տ/Բ պետ

Հ.Քիչմիշյան

<<ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱՎԵՐՈՒԹՅՈՒՆ

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

(նոր խմբագրությամբ)

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Պետական կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Պետական կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Հիմնադիր) 2005 թվականի հուլիսի 21-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 2158-Ն որոշման հիման վրա:

3. Պետական կազմակերպությունն ունի իրավաբանական անձի կարգավիճակ:

4. Պետական կազմակերպությունն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք), «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներին համապատասխան, և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Օրենսգրքով, Օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով ու սույն կանոնադրությամբ: Սույն կանոնադրությունը Պետական կազմակերպության միակ հիմնադիր փաստաթուղթն է:

5. Պետական կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Պետական կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Պետական կազմակերպության կանոնադրությունը նրա հիմնադիր փաստաթուղթն է:

7. Պետական կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են լիազոր պետական մարմնի որոշմամբ:

8. Պետական կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվամբ կլոր կնիք, որոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

9. Պետական կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» Պետական ոչ առևտրային կազմակերպություն.

ռուսերեն լրիվ՝ «Гюмри кахаки ереханери социалакан огацутян кентрон»

Государственная не коммерческая организация.

կրճատ՝ «Гюмри кахаки ереханери социалакан огацутян кентрон» ГНКО.

անգլերեն լրիվ՝ „Gyumri qaghaqi erekhaneri socialakan hogacutyany kentron,, State non trade organization.

կրճատ՝ „Gyumri qaghaqi erekhaneri socialakan hogacutyany kentron,, SNTO.

10. Պետական կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Գյումրի, Տերյան 6գ.:

## II. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Պետական կազմակերպության գործունեության հիմնական առարկան և նպատակը Գյումրի քաղաքի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, ծնողական խնամքից զրկվելու վտանգի տակ գտնվող երեխաների, աճի և զարգացման համար անբարենպաստ և վտանգավոր կենսապայմաններում գտնվող երեխաների, ինչպես նաև ինքնասպասարկման ունակություններ ունեցող հաշմանդամ երեխաների

(այսուհետ՝ ռիսկի ենթակա երեխաներ) հիմնախնդիրների կարիքների գնահատումը և սոցիալական ախտորոշումը (պատճառների, բնույթի, սրության պարզումը) և վերջիններիս լուծմանն աջակցելն է՝ համագործակցելով պետական և ոչ պետական կառույցների հետ:

12. Պետական կազմակերպության գործառույթներն են՝

ա) Գյումրի քաղաքի երեխաների հիմնախնդիրների լուծման իրավասություն ունեցող պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ համագործակցելով՝ հայտնաբերել ռիսկի ենթակա երեխաներին:

բ) ստեղծել ռիսկի ենթակա երեխաների, նրանց ընտանիքների, այդ թվում խնամատար ընտանիքների վերաբերյալ տվյալների շտեմարան:

գ) աջակցել ռիսկի ենթակա երեխաների աշխատանքային հմտությունների ուսուցման և վերականգնման աշխատանքների կազմակերպմանը:

դ) կատարել ռիսկի ենթակա երեխաների և նրանց ընտանիքների անդամների սոցիալ-հոգեբանական վերականգնման և հասարակության մեջ լիարժեք ինտեգրմանն ուղղված աշխատանքներ:

ե) աջակցել ուսումնական հաստատություններից դուրս մնացած երեխաների կրթություն ստանալուն:

զ) սոցիալ-հոգեբանական իրավաբանական խորհրդատվական օգնություն տրամադրել ռիսկի ենթակա երեխաներին և նրանց ընտանիքներին:

է) աջակցել Գյումրի քաղաքի ռիսկի ենթակա երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքներին:

ը) աջակցել առողջապահության, կրթության, մշակույթի և այլ ոլորտների հաստատությունների ծառայություններից երեխաների օգտվելու մատչելիությանը:

թ) տեղծել անվճար «Վստահության հեռախոսակապ» ռիսկի ենթակա երեխաների, նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև շահագրգիռ այլ անձանց համար:

ժ) Տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված և այլ միջոցների հաշվին Պետական կազմակերպություն հաճախող երեխային տրամադրել սնունդ, Պետական կազմակերպություն հաճախելու համար քաղաքային տրանսպորտից օգտվող շահառուներին տրամադրել ճանապարհածախս, շահառուներին տրամադրել հագուստ և գրենական պիտույքներ, ռիսկի գոտում հայտնված երեխաների և շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով տրանսպորտից օգտվող Պետական կազմակերպության աշխատակիցներին տնային և համապատասխան կառույցներ այցելություններ կատարելու համար տրամադրել ճանապարհածախս:

### III. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՒՅԸԸ

13. Պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Հիմնադրի կողմից Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնված գույքի հաշվին, ինչպես նաև Պետական կազմակերպության գործունեության ընթացքում ստեղծված և ձեռք բերված գույքից:

14. Պետական կազմակերպությունն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Հիմնադրի որոշումներին և սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տնօրինել, տիրապետել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

15. Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ Հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ Պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

16. Պետական կազմակերպությունը կրում է իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքի պահպանման հոգսը:

17. Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

18. Հիմնադիրը կարող է Պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

19. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից Պետական կազմակերպությանն օգտագործման իրավունքով ամրացված գույքը:

20. Պետական կազմակերպությունն իրավունք չունի օգտագործման իրավունքով ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

21. Հիմնադրի կողմից գույքը Պետական կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

22. Հիմնադրի կողմից Պետական կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Պետական կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահից:

#### IV. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

23. Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են՝

ա) Հիմնադիրը, նրա լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

բ) Պետական կազմակերպության տնօրենը:

#### V. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

24. Պետական կազմակերպության Հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

25. Հիմնադիրն ունի Պետական կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

26. Հիմնադրի բացառիկ իրավունքներն են՝

ա) Պետական կազմակերպության հիմնադրումը:

բ) Պետական կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը:

գ) Պետական կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը:

դ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

27. Նախարարությունը՝

ա) հաստատում է Պետական կազմակերպության կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները և լրացումները.

բ) հաստատում է Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և /կամ/ օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը.

գ) սահմանում է Պետական կազմակերպության կառավարման կարգը.

դ) նշանակում է Պետական կազմակերպության լուծարային հանձնաժողով և հաստատում է Պետական կազմակերպության լուծարային հաշվեկշիռը.

ե) իրականացնում է Պետական կազմակերպության գործունեության հսկողությունը:

զ) կասեցնում է կամ ուժը կորցրած ճանաչում Պետական կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները:

է) լսում է Պետական կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները:

ը) հսկողություն է իրականացնում Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող և /կամ/ օգտագործման իրավունքով ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ Պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար:

թ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի որոշումներով և Պետական կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ գործառույթներ:

## VI. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԸ

28. Պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Պետական կազմակերպության տնօրենը, որին նշանակում և ազատում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը (այսուհետ՝ նախարար)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N224-Ն որոշման համաձայն իրականացված մրցույթի արդյունքների հիման վրա:

29. Պետական կազմակերպության տնօրենը Հիմնադրի որոշումներով, Պետական կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Պետական կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի որոշումների, նախարարի հրամանների, Պետական կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

30. Պետական կազմակերպության տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը Հիմնադրի անունից կնքում է նախարարը: Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները նախարարության, պետական կազմակերպության կառավարման այլ մարմինների հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի դադարման՝ օրենքով սահմանված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնց վերաբերյալ պայմանավորվող կողմերը կզան համաձայնության: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին:

31. Պետական կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

32. Պետական կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Պետական կազմակերպությանը պատճառված վնասի համար: Պետական կազմակերպության տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

33. Պետական կազմակերպության տնօրենի լիազորությունները դադարեցնող մարմինը պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել նաև նրա կողմից Պետական կազմակերպությանը պատճառված վնասի հատուցման հարցը:

34. Պետական կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել Հիմնադրի, նախարարության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրահանգները, հրամանները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

35. Պետական կազմակերպության տնօրենի բացակայության կամ նրա կողմից իր լիազորությունները կատարելու անհնարինության դեպքում այդ լիազորություններն իրականացնում է նրա տեղակալը, դրա անհնարինության դեպքում նախարարի հրամանի համաձայն այդ լիազորությունները կարող են դրվել մեկ այլ անձի վրա:

36. Պետական կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Պետական կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը, կնքում պայմանագրեր և այլ գործարքներ.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի որոշումներով ու նախարարի հրամաններով և Պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Պետական կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

գ) տալիս է Պետական կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ լիազորագրեր՝ վերալիազորման իրավունքով.

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Պետական կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի միջոցներ և նշանակում կարգապահական տուժեր.

ե) սահմանում է Պետական կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը, հաստատում նրանց կանոնակարգերը.

զ) հաստատում է Պետական կազմակերպության ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների կանոնադրությունները.

է) նշանակում է Պետական կազմակերպության ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների ղեկավարներին, նրանց տալիս համապատասխան լիազորագրեր.

ը) օրենքով և Պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) քանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

ժ) ապահովում է Պետական կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում նախարարություն.

ժա) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պետական կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

## VI. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

37. Պետական կազմակերպության գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, նախարարությունը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ պետական կառավարման մարմինները:

38. Պետական կազմակերպության ֆինանսական գործունեությունը ենթակա է վերստուգման (աուդիտի)՝ նախարարության աշխատակազմի աուդիտորի կամ նախարարության կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կողմից:



39. Պետական կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է՝ հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

### VIII. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

40. Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Հիմնադրի որոշմամբ՝ Օրենսգրքով սահմանված կարգով:

41. Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

### IX. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒՃԱՐՈՒՄԸ

42. Պետական կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց նրա իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

43. Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել Հիմնադրի որոշմամբ՝

ա) եթե հնարավոր չէ հասնել Պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների փոփոխություն:

բ) Պետական կազմակերպության կողմից սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներից շեղվելու դեպքում:

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով:

44. Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

45. Պետական կազմակերպության լուծարման դեպքում Պետական կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

46. Պետական կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած այդ մասին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում համապատասխան գրառում կատարելու պահից: